



**ԲԱԺԱՆՈ՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ**  
 Պուշխարիոյ համար  
 Տարեկան 12 Ֆր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արտասահմանի հա-  
 մար Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 ֆր.  
 Վեցամսեայ 1.50 »  
**ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ**  
 Պանուցման տոյր առաջին  
 երեսին համար 40 ամերիկ.  
 է. իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 ամերիկ է. երեքին  
 առաջին անգամներու համար  
 20 Օւյ զնոյր կրնայ:

# ՇԱՐՋՈՒՄ

հրատ դրկել  
 լրբանս հասցեին  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)  
 Գրութիւնք եւ յին տրուի  
 Արտասահմանի ձեռքի  
 ( 20 ՍԱՆԹԻՄ )  
 Պուշխարիոյ համար ձեռքի  
 ( 15 ՍԱՆԹԻՄ )

**ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ**  
 ԵՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԳՐԵՐԸ

**Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ**  
 Գլխաւոր գործակալ  
 ՊՈՒՎԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՆԷ ԵՐԱՇ-  
 ԽԱՒՈՐԵԱՆ, ՍՕՑԻԱԼ ՔԱՂԱՎԱՆ ՎԻՃԱ-  
 ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փոփոգողները կրնան  
 իրեն գրել  
 Զար-Պորիս փողոց Վանա

**ՈՒՐԱՒԱԼԻ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ**

Հայ ազգը գեռ կորուստի դա-  
 տապարտուած չէ. Վերջին տա-  
 րիներու քառասուն անկերպա-  
 րանութիւնը թէեւ դառն վախեր  
 ծնաւ բարեւ, աղնիւ հայրենասէր,  
 այլ դիւրաւ յուսահատող և ոչ  
 հեռատես հոգիներու մէջ, սա-  
 կայն ժամանակը պատմական և  
 ընկերական օրէնքներու համա-  
 ձայն, վանեց անկ փոթորիկը,  
 որ աւերամ չէր գործեր, բայց  
 կրնար ճգնաժամի մը փոխուիլ.  
 Եթէ ազգին մէջ կենդանի ու-  
 ժերը գեռ վառ մնացած չըլլային:  
 Կեղծին ու ճշմարտին, խաբե-  
 բային ու անձնուէրին, պոռոտա-  
 խօս ստահակներու և լուրջ կրու-  
 ռողներու անտրակելի խառնիճա-  
 ղանքէն ետքը, որոնք յանուն  
 յեղափոխութեան դրօշակ սկսած  
 էին պարզել, հիմա, հրապա-  
 րակը կը մաքրուի, խաբեբանե-  
 րու փոհմակը խայտառակուած,  
 մղած անտոժի կուրին մնջ յազ-  
 թահարուած՝ մէկգի կը քաշուի,  
 ամբողջ ժողովրդին զգուանքն ու  
 անէճքը ասնելով իր ետեւէն:  
 Այսօր բոլոր անխարդախ հոգիները  
 սկսած են ջանքեր ընել իրարու  
 մօտենալու, զիրօր հասկնալու  
 և ձոյլ միութեամբ ընդհանուր  
 թշնամին դիմագրաւելու:

Այս օրերու երեւոյթներն են ա-  
 սոնք, որոնց վրայ պէտք է  
 անդրադառնանք երբեմն, սիրա-  
 աւանելու և համարուելու համար  
 թէ հայ ազգին մէջ գեռ ամէն  
 բան չէ մեռած:

մոզումի անկեղծ արտայայտու-  
 թեանց՝ որոնք ազգին ճակա-  
 տագրական կռուին ընթացքը  
 պիտի բնորոշեն, ուզին պիտի  
 գծեն և անոր բազմ պիտի վրձ-  
 ոեն Սին անձնականութիւնները,  
 գատարկ ետքը չափէն աւելի  
 ճնշեցին ազգին վրայ, կրկին  
 իրենց տեղը գտնելու համար ա-  
 նոր անջեւ բացուած այս նոր  
 շրջանին մէջ եւս:

Ինչ պիտի ըլլայ հիմա հայ  
 ժողովրդին գործը, որ գիտցաւ  
 վերջապէս, երկար վարանումնե-  
 րէ ետքը, վճռական քայլն առ-  
 նել իր մէջ ու իր անունով սնա-  
 նոյ մէկ քանի ցեցերը վտա-  
 րելու համար:

Չոր խօսքի ու խորագիտ գրչի  
 մարդոց երեսին նետած իր ար-  
 համարհանքով՝ հայ ժողովուրդը  
 արդէն գործնական տպացոյցը  
 տուաւ իր ողջմտութեան, և ցցուց  
 թէ իր փրկութեան ճամբան լաւ  
 ըմբռնած է ինք, թէ սին յոյ-  
 սերը այլ եւս չեն փայտայտ իր  
 գիւրախար երեսակայութիւնը,  
 և թէ՛ «զինեալ յեղափոխութե-  
 նէն» զատ՝ իրեն համար աղա-  
 տութեան ու կեանքի լաւագոյն  
 ճամբայ մը չի կայ:

Որքան ալ բուռն ըլլայ օտա-  
 րին համակրութիւնը մեզի հան-  
 դէպ, անիկա չի խանդավառի,  
 չի լեցոյր երբեք այն եռանդով  
 որ մարդը ինքնաբերաբար անձ-  
 նուրաց ու կոտոր կը դարձնէ,  
 մինչեւ որ մեր կողմէ չի տեսնէ  
 ամբաստանութեան, անհատատար  
 կուրի մէջ առիւծի անվհեբու-  
 թեան այն ոգին, «փոքրիկ ազ-  
 գերու այն սրտաշարժ մեծ ճիգը»  
 որ յեղափոխութիւն կը կոչուի:

Քանի որ հայ ժողովուրդը ար-  
 դէն սկսած է ըմբռնել իր ինք-  
 նաբուխ ու մին կարեւորութիւնը,  
 այլեւս պէտք չէ որ ժամավաճառ  
 ըլլայ, օտար համակրութիւններ  
 մտաբու, այլասեռ խղճմտանք-  
 ներ բռնի զարթուցանելու ճի-  
 գեր բնելով: Անոնք ինքնին կը  
 յառնեն, երբ մեր գիւցազնա-  
 կան կոտիւն արձագանքը իրենց  
 սրտերը համակէ, Տեսանք թէ  
 մեր լալկանութիւններուն յարու-  
 ցած համակրութիւնը ո՞ր աստի-

ճան գործնական արգիւնք մը  
 ունեցաւ մեզի համար: Եոյնքան  
 անզօր չէ յուսահատ կատաղու-  
 թիւն և անվկանդ պատերազմո-  
 ղին շուրջը խմբուած համակրու-  
 թիւնը, որ կարծես գիւթականօ-  
 րէն կը խլէ ակամայ մեր սիրտն  
 ու հոգին և կը գզգզեցնէ ամե-  
 նէն ապառաժ զանգուածները, ա-  
 մենէն անսիրտ գիւնադէտները:  
 Մենք միշտ ջատագովը եղած  
 ենք «զինեալ յեղափոխութեան»  
 հայկական յեղափոխութիւնը եւ-  
 րոպա փոխադրել ուղղող գրագէտ  
 ազգային ճիւղներուն ապուշութիւն-  
 ները ամէն առթիւ պոխարակած  
 ենք, և ուրախ ենք որ, այսօր ա-  
 սոնց ձայնը այլեւս մարած է, ի-  
 րենք գառաւիք եղած են, և իրենց  
 բոլոր մեծամտութեամբ միասին  
 ոչնչութիւններն ըմբռնելով՝ լե-  
 ղունին ծալած՝ հրապարակէն  
 քաշուած են:

Այս ալ ուրախալի երեւոյթնե-  
 րէն մէկն է:

**ՄԱՏԵՆԱԻՍՏԱՎԱՆ**

Պատմութիւն Հայոց, հեղինակ  
 Հ. Համբարձումյան թերթիմանեան, Վե-  
 նեսիկ. — Բնաշխարհիկ բառարան,  
 Գ. պրակ. գործ Հ. Եփրէմեանի, Վե-  
 նեսիկ. — Մաքնիսական քուն հյքսո-  
 տիսմէ, Հ. Ս. Սարգսի, Վենեսիկ.  
 Ո՞ր ուսուցիչ, նոյնիսկ ո՞ր ա-  
 շակերտը չէ զգացած ազգ. պատ-  
 մութեան գասագրքի մը պէտքը:  
 Թուարանութեան, քերականու-  
 թեան, ֆրանսերէնի և ուրիշ ու-  
 սումներու վրայ տարին տասր տե-  
 սակ գասագրքեր կը յօրինուին,  
 որոնք ամենքն ալ տղուն «նոր  
 մեթոտներով» բան սորվեցնելու  
 յաւակնութիւնն ունին, բայց ոչ  
 մէկը չէ խորհած կամ չէ ուղած  
 հայ տղուն է՛ն կենսական և ան-  
 խուսափելիօրէն անհրաժեշտ պէտ-  
 քով, այսինքն ազգ. պատմու-  
 թեան գասագրքի մը յօրինմամբ  
 զբաղիլ: Պարագաներու անպա-  
 տեհսութիւնը չի կրնար չքմեղանք  
 մը ըլլալ այս անհոգութեան, քա-  
 նի որ Թուրքիայէն դուրս շատ  
 գիւրաւ կարելի էր այգօրինակ  
 գասագրք մը պատրաստել, Ա-

հա Վենեսիկ Միսիթարանները  
 այդ պէտքը զգացած կերեւան:  
 Վենեսիկ, հայ մատուրակա-  
 նութեան այդ գիւթական սիրտը,  
 ժամանակ մը անշուշտ ու կզգի-  
 ցած ապրեցաւ վանական տնգոյն  
 ու անհամ տարտամութիւններ  
 միայն ստեղծելով, Բայց ազգը  
 սր երբեմն իր մտաւորական փըր-  
 կութիւնը տեսած էր անկէ, եւ  
 որուն կը պարտէր իր ամբողջ  
 անցեալին անհոգութեանց անա-  
 զարա պահպանումին փառքը,  
 չի ներեց որ Վենեսիկի Միա-  
 բանութիւնը թուլութեան մէջ  
 փոտի, քննադատեց, խարաղա-  
 նեց իսկ: Միւս կողմէ Միսիթար-  
 ան հայերը զգացին իրենց թե-  
 րութիւնը, ուղեցին դարմանել  
 զայն, և ահա 5—10 տարիէ իվեր  
 կը տեսնենք որ Վենեսիկ մեր  
 ազգին Պուտայ իր վիճակին հետ  
 անմիջական կապ ունեցող գոր-  
 ծեր, կը ձգտի հետաքրքրուիլ  
 անոր ցաւերով և իր միջոցներով  
 անոնց դարման մը տանիլ կաշ-  
 խատի:

Բրպէս զի մեր նիւթէն չեղած  
 չըլլանք, զանց կրնենք Վենե-  
 սիկի հայրերուն վերջին մէկ եր-  
 կու տարուան գնահատելի աշխա-  
 տութեանց դուրստիքն ընել:  
 Անցնինք մեր նիւթին:

Հայոց պատմութեան այս գասա-  
 գիրքը որ 102 էջերէ կը բաղ-  
 կանայ, սիրուն ու ճաշակաւոր  
 գիրք մըն է, կողքին վրայ ունե-  
 նալով հայկական քանդակագոր-  
 ծութեան նմանութեամբ յօրին-  
 ուած պատկեր մը սգաւոր Մայր  
 Հայաստանի, վերելք Արարատը,  
 ճակտին հայկական թագը, շուրջը  
 էջմիածինը և ուրիշ շէնքեր:  
 Այնպէս որ գրքին արտաքին  
 տեսքը արդէն աշակերտը պիտի  
 հրապուրէ և զայն պիտի պարու-  
 նակութեամբը հետաքրքրէ:

Հ. Թերթիմանեանի գասագիրքը  
 պատրաստուած է մասնաւորապէս  
 ստորին դասարաններու համար,  
 հարց պատասխանի ձեւով է  
 կընդգրկէ մեր ամբողջ պատ-  
 մութեան շրջանը, սկիզբէն  
 մինչեւ վերջին հայկական դէպ-  
 քերը: Գիրքը զարդարուած է

43 պատկերներով հայ հին թագաւորներու, պատերազմական տեսարաններու. և նոր գէմքերու առաւելութիւն մը՝ որով պիտի կրնայ գերազանցել ցարգ հրատարակուած բոլոր իր նախորդները:

Այսու հանդերձ գործը իր շատ կարեւոր թերութիւններն ունին, որոնց համար կը յուսանք թէ Հ. Թերճիմանեան թոյլտուութիւն կուտայ մեզ խօսելու:

Ամէն բանէ առաջ գրքին լեզուն բոլորովին անյարմար է: Հակառակ Հ. Թերճիմանեանի յայտնի ջանքերուն լեզուն բոլոր կարելոյն դիւրահասկանալի դարձնելու համար, նոյնիսկ երբեմն կատարած բռնութիւններուն, ինչպէս, «Իրեք» փոխանակ «Իրեք» «Իջաւ» փոխանակ «սերեցասի» ևն. յարգելի հայրը չէ կրցած լեզուի միօրինակութիւնը պահել և գործածած է հարկաւոր հին ձևերը, ինչպէս, «անուամբ» «մարդկանց» «թուուներ» «նայայ» որոնք ներքի չեն Ա. կամ Բ. դասարանի յատուկ գրքի մը մէջ մանաւանդ:

Գրքին պատրաստութեան առաջ յարգելի հեղինակը կերեւայ թէ նկատի չէ առած մեր ազգ. վարժարաններու ծրագիրն ու բաժանումները: Այնպէս որ, իր այդ վիճակին մէջ անյարմար է աշակերտներու գործածութեան յանձնել: Ա. դասարանի համար ծանր ու բռնաւորուած է, իսկ երկրորդին համար շատ տարրական: Կարեւոր կէտերու մէջ հեղինակ հայրը խիստ յարեւանցի

անցեր է, մինչդեռ երկրորդական կէտերու վրայ ծանրացած է յիշուով շատ մը անուններու ընթացքէն: Գրքին սկզբնաւորութիւնը իր հարց-պատասխանի ձևով ճիշդ մեզի կը յիշեցնէ աւանդական ֆրիստոնէականին «հաւատքով ինչ ես» «քրիստոնեայ եմ» բանաձևը:

Մենք կը կարծենք որ, աւելի լաւ եղած կըլլար, եթէ հարց պատասխանի ձևը չի տրուեր, ամէն գէմք, կամ ամէն շրջան առանձին գլուխ կազմէր, որով տղան թուրապէս զոց սորվելու փորձութեան մէջ չէր իյնար և հեղինակին համար ալ աւելի դիւրութիւններ կընձեռէր ուղած կէտին վրայ ծանրանալու:

Հեղինակ հայրը իր գործին աւելի մասալի ձև առեր է, տող մը, բառ մը չի կայ Հայաստան երկրին, ժողովուրդին, անոր բարբերուն, սովորութիւններուն, կրօնքին, դրացի ազգերուն նկարագրին, անոնց և հայերուն մէջ տիրող կապերուն վրայ, մանաւանդ Պարսից համար: Եթէ դասագիրքը Ա. դասարանի համար է, ինչպէս ըսինք, ծանր պատրաստած է և երբեք չի յարմարիր, եթէ երկրորդին համար է, այդ մասերը դնել անհրաժեշտ էր, որովհետեւ պատմութեան նպատակը չոր դէպքեր, թուականներ ու անուններ տղուն մտքին մէջ խառնի խառն ամբարել տալ չէ, այլ անոնց շնորհիւ ազգերու նկարագիրը, լաւ կամ գէշ կողմերը, սխալ կամ ուղիղ գործերը

անոր հասկցնել: Այս սեսակէտով Հ. Թերճիմանեանի գիրքը երբեք չի կրնար մեր վարժարաններու մէջ օգտակարօրէն գործածուիլ:

Մեզի երկու կարգի ազգային պատմութեան դասագիրք պէտք է. մէյ մը նախնական կարգերու համար, ուր պէտք է խօսիլ հին կամ նոր էն նշանաւոր դէպքերու կամ դէպքերու վրայ պատմութեան ձևով, (ճիշդ ինչպէս Տ. Յ. Պոնճուզեանի ընթերցարաններուն պատմական մասը կազմուած է) և մէյ մըն ալ կանոնաւոր դասընթացքի ձևով, ուր աւանդական պատմութեան հետ, երեւայ նորագոյն հետազոտութեան մասին անցողակի յիշատակութիւններ, Հայկի. Սրամի աւանդութեանց քովիլը Ուրարդուի թագաւորութեան վրայ ծանօթութիւններ, որպէս զի տղան հետզհետէ պատրաստուի սպագային քննական պատմութիւնը հասկնալու և յանկարծակիի չգայ երբ լսէ թէ՛ մեր Հայկազեանց շրջանը ամբողջ առասպելներու շարք մըն է, զուրկ ստուգութեանէ:

Միւթարեան հայրերը, քանի որ սնգամ մը աշխատութիւն և նիւթական զոհողութիւն տալով աղագային պատմութեան դասագիրք մը պատրաստելու տրամադիր են, գտնէ խնամքով և ընտրութեամբ ու լաւ պատրաստեն, որպէս զի ընդունելութիւն գտնէ հայ վարժարաններէն և իրենք ալ քաջալերութիւն ուսանան ու նոր ձեռնարկներու և տեւէ ըլլան: Ըստ անգամ եթէ այդ աշխատութիւնները ապարդիւն կը մնան,

յանցաւորը մենք չենք, այլ հեղինակները, որոնք նկատի չեն առնել մեր պահանջները:

Կը յուսանք թէ գործին երկրորդ տպագրութեան ստեղծ այս դիտողութիւնները նկատի կառնուին և աւելի խնամոտ ու լուրջ դասագիրքի մը հանգամանք կը տրուի գործին, միանգամայն աշխատելով զայն պատշաճեցնել մեր վարժարաններու որոշ մէկ դասընթացքին:

ՇԱՂՊ  
(Մնացեալը յարողով)

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Ազգ. վարժարանաց եւ մանկապարտէզի տարեկան հանգէսը անցեալ կիրակի տեղի ունեցաւ Սանդրալի սրահին մէջ, խոսն բազմութեան մը ներկայութեամբ: Արտասանութիւններ, երգեր մանկական խաղեր բաւականէն աւելի երկար ժամանակ մը գրաւեցին: Բաշխուեցան աշակերտներու եւ աշակերտուհիներու վիճակացոյցները:

Հանգէսը փակելէ առաջ վարժարանին տնօրէնը իր տեղեկագիրը կարգաց, վարժարանին վրայ քանի մը տեղեկութիւններ տուաւ. ուսուցչական խումբը 11 հոգիէ կը բաղկանայ, որոնց մին Տօթթ. Ա. Ա. թաբէկեան, ինչպէս անցեալ տարի, այս տարի ալ առանց ու եւ փոխարինութիւն պահանջելու, վարձուած պաշտօնակալի մը կանոնաւորութեամբ դաստիարակ էր: Տնօրէնը ուսուցչական խումբի եւ աշակերտներուն կողմէ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնեց, որուն հասարակութիւնն ալ իր կողմէ մասնակցեցաւ և յայտնեց իր համակրութիւնը դէպի ազնիւ Տօթթօրը բուն ծափահարութեամբ ընդունելով տնօրէնին այդ յայտարարութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի. ՎԱԶՈՎ

ՈՉ ԿԸ ԽՂՃԱՆ ՈՉ ԿԸ ՍԽԵՆ

VIII

(Շար. նախորդ քիւն)

Պրըջքով ապշած կը նայէր: Ան անասունը, Բէթրէն, քնացր և բան մը չէ լսեր: Երեւակայէ որ քու զգեստներդ ալ իմիններուս հետ տարեր է:

— Ըսել է ես ա՛լ սկիւր կը մնամ, հարցուց Պրըջքով, երբ շուարածի պէս աչքերը պտտցուց:

— Դուն ալ, ես ալ, Ոչինչ: Պէտք է երթամ գտնեմ այդ կախուածը... վրատիկով գլխարկը դնելով, փայտը առաւ ու գուռը բացաւ:

Ճիշդ այդ պահուն Մաքէտօնսքիին հետ իբր պարնուեցան որ ներս կը մտնար:

— Բարիլո՛յս, բարիլո՛յս... պարուն կանուխ արթնցողներ, ըսաւ, ուրախ ու անպատշաճ ժպիտով մը: վրատիկով առանց ատոր պատասխանելու, համր ու գոյրացուցաւ իւր

կը գիտէր:

— Այսօր ալ սատանայի ցուրտ մը կայ, ըսաւ Մաքէտօնսքին, հայելիին առջեւ, փողկապի տեղ իր վզին կապած կարմիր թաւիկնակի կապերը շտկելով:

Յուսկ յետոյ վրատիկով իր լուծութիւնը խզեց:

— Մաքէտօնսքի, ըսաւ կամացուկ մը, գիտե՞ս որ այս գիշեր ես կողուպտուած եմ:

Մաքէտօնսքին սահմակածի պէս աչքերը լայն բացաւ:

— Պրըջքովին ու իմին բոլոր զգեստներս գողցած են:

— Ա՛յս գիշեր, ըսաւ զարմանալով Մաքէտօնսքին:

— Ա՛յո՛:

— Մինչեւ կէս գիշեր միթէ հոս չէ՞ր:

— Ան աւելի զարմանալի է, ինչպէ՞ս կարելի է դողնալ, քանի որ ես ժամը կէսին վերադարձայ, եւ չկային: Մաքէտօնսքին կը լացազգանչէր ու կաւաղէր. ան սկսաւ անխիղճ գողերուն հայտնել, և բան մը չիմացած ըլլալուն վրայ կը զարմանար, ամբողջ գիշերը հոն չի մնալուն վրայ ինքզինքը կը մեղադրէր, կը սպասնար որ անպատշաճ շտրագործները ձեռք պիտի իյնան և այն ատեն արիւններն պիտի խմէ, եւ նախա-

տինքներ կը թափէր «մամալիկարներուն» գլխուն, որոնք լաւ ոստիկանութիւն չունին:

Մաքէտօնսքին երզուընցաւ ոտականութեան տեսուչին ննջասնեակը թալիլ, առանց մամալիկարներու տեղեկութեանը, ցաւեցաւ Պրըջքովին, որուն համար սիրտը կը ցաւեր, ան հազար մէկ տեսակ սպաննական ու բուն խօսքեր արտասանեց պատահածին համար իր վշտակցութիւնը և կողոպտողներուն գէմ իր զայրոյթը երաշխաւորելու համար:

Այս տեսարանէն կէս ժամ յետոյ, Մաքէտօնսքին, նեղ փողոցի մը մէջ կը հանդիպէր կարճուկ, կուզ ու անմաքուր հրէայի մը, իւրոտ տափակցած ծամերով և գլխին ճգմուած ցիւրիտով մը:

Ան հին հագուստներ առնող ու վաճառող էր:

Երկար ժամանակ Մաքէտօնսքին անոր հետ փոփոսց:

Յետոյ ուրիշ կողմ դառնալով իր ճամբան շարունակեց, բերնին մէջ հայրուկի երգով մը:

Քաղաքի ծայրի խրճիթը վերադարձաւ ուր Բօքչէթօն դինքը հիւրասիրած էր, ինչպէս Հահին ալ, և երկուքն ալ հոն գտաւ: Բօքչէթօն Հահինին ձեռագիր մը կը կարդար և

բարձրաձայն կը ծիծաղէր:

Մաքէտօնսքին գլխի շարժումով մը բարեւեց, և գլխարկը նետեց չի շակուած ու խառնափնդոր անկողիններու վրայ, խոր շունչ մը քաշեց և փռուեցաւ անկողիններուն վրայ:

Ի՞նչ մը հանդարտուէն յետոյ, չը համբերեց ու ըսաւ.

— Իմացա՞ք, այս գիշեր վրատիքովը կողոպտեր են:

Բօքչէթօն իր ընթերցումը դադարեցուց:

— Ի՞նչ կըրես, այդ անկարելի է:

— Հիմա անտեղէն կուգամ, զգեստները վերցուցիր են:

— Միայն ատոնք: Ոչինչ, Գրաւ կը գնեմ, եթէ Շիւպէրթայն ատոնք գողցած չէ, ըսաւ Հահին (Շիւպէրթայն քաղաքին էն հարուստ հագուստավաճառն էր):

— Բայց, մտաբերեցէք, թէ ի՞նչ խայտառակ գրութեան մէջ գտնուած էի, հաւատասցնելու համար թէ ես այդ գնի՞նքն մէջ մաս չունիմ, պէտք էր միլիօն մը գրոյց ընել: Ալ երեւակայեցէք նզոված գրութիւնս...

Հահին ծիծաղեցաւ:

— Տես, գործը ինչպէս է, ըսաւ Մաքէտօնսքին համոզիչ ձևով. մինչև կէս գիշեր անոր մօտն էի: Պրըջքովի հետ ալ... Պրըջքով կը բարեւեցէր... հա՛, Պրըջքովի հետ էի...

Տեղեկագրին մէջ տնօրէնը կը ծանուցանար մէկ քանի կենսական կէտերու վրայ: Նախ ցաւ կը յայտնէր որ կարգ մը մարդիկ զուրկն տեղը եղած չեղած գիտողութիւններ կը նեն, բերնին եկածը զուրս կուտան զպրոցին համար, բայց որ մը վարժարանէն ներս ոտք չեն դնել: Տնօրէնը սրամտօրէն չսակցուց թէ՛ այդ տեսակ գիտողութիւնները լոկ պոռտախօսութիւններ են եւ ճշմարիտ քննադատողը, վարժարանին բարեկաման իսկապէս ցանկացողը նախ վարժարան կայցելէ, ուսուցչական գործընկերու ներկայ-կըլլայ, կարծիք կը փոխանակէ եւ ըստ այնմ կը քննադատէ:

Յետոյ տնօրէնը շնչաց թէ՛ ամէն ծնողք պարտականութիւններ ունի զկտր գարտը եւ իրաւունքներ ունի անկէ պահանջելու: Յաւ յայտնեց որ ծնողքները իրենց պարտականութեանց մէջ կը թերանան եւ ատով պատճառ կըլլան վարժարանին անկանոնութեան: Այդ թերացումներէն մէկն է, որ ինտելի չամար տղաքը ուշ վարժարան զրկելը, այնպէս որ ուսուցիչները ստիպուած կըլլան ամբողջ սեպտեմբեր ամիսը պարսպ անցնել տղոց հաւաքուելուն սպասելով: Տնօրէնին կարծիքով պէտք է օգոստոս 15ին բանալ վարժարանը, որպէս զի սեպտեմբեր 1ին արդէն ամէն բան պատրաստուած ըլլայ եւ տարեշրջանէն ժամանակ չի կորսուի:

Տնօրէնը մոտեցաւ յիշելու նաեւ թէ՛ ծնողքները երբեք հոգ չեն տան իր անգամ մը զպրոց զրկելէ ետքը, իրենց տղոց կանոնաւոր եթեւեկութեան եւ աշխատութեան: Այնպէս որ շատ անգամներ աղաները վարժարանէն բացակայ կըլլան եւ ծնողքները տեղեկութիւն չեն ունենար, եւ եթէ իմանան ալ անփոյթ կը գտնուին: Կանոնացան ծնողքներ ալ, որոնք, երբ երեւց տղուն վրայ խստութիւն ի գործ գրուեցաւ, զանազան թերութիւններ նշմարուելով, եկան բարեխօսելու իրենց տղուն համար:

Եւ խնդրելու որ ուսուցիչները «չատնեղը չի դնեն» զայն: Չենք գիտեր թէ՛ ուրիշ մանր է այս սովորութիւնը բայց ուսուցիչներու կողմէ կարեւորութիւն չի տրուեցու այդ կարգի գիտութիւններուն, որոնցմով ծնողքները իրենց տղաքը կը չփասցնէին միայն եւ անոնց փճացումին պատճառ կըլլային, ուսուցչին ազդեցութիւնն ալ չեզոքացնելով:

Յետոյ, Տնօրէնը խոսեցաւ քննութեան ձեւակերպութիւններուն աւելորդութեանց վրայ: Յայտնեց թէ՛ ներկայ ուսուցչական խումբը սկզբունքով հակառակ էր, բայց սովորութեան դէմ բուն ցոյց մը կատարած չըլլալու համար, այս սարքի ընդունեց քննութիւնները եւ որոշած է եթէ՛ յատաշիկայ տարի շարունակէ, թողորմին վերջնել այդ անպէտք ձեւակերպութիւնը:

Տնօրէնը ծանրացաւ նաեւ ուրիշ կէտերու վրայ, որոնց մէջ ազգայնաստեղծական մարմինները աւելի մեղապարտ էին: Յիշեցուց թէ՛ վառնան միշտ ուսուցիչ փոխելու յիմար ախտը ունեցած է, եւ այդ պատճառաւ չէ կրցած իր վարժարանէն կանոնաւոր արդիւնք տեսնել: Պէտք է լաւ ուսուցչական խումբ մը ընտրել, եւ ընտրելէ ետքը, պէտք է պահել զայն գոնէ՛ զպրոցական շրջան մը բոլորելու համար: Ըսաւ թէ՛ այդ փոփոխութիւններու պատճառը շատ անգամ լոկ աղայական քայքայ է, որուն կը գոհուի ամբողջ սերունդի մը ապագան: Տնօրէնը շատ ազդու կերպով ուսուցչական պատիւը եւ անկախութիւնը՝ պատկանեց: Այնպէս ձգտեց իրենց անցած են այն երանելի օրերը, ուր վարժարանը ստիպուած էր խոչորդուիլ ու հաստփոր ամբարայն առիւ բարեւ թոնել եւ անոր չղաղալին կրակ մտաուցանել: Չէ, հիմա կուտան վարժարաններէն, գոնէ՛ անոնց մէկ որոշ մասէն աստանկ բան սպասելու չէ: Վարժարանին մէջ իբրեւ ուսուցիչ, իրենց գործերու բացարձակ տէրն են, իսկ

անկէ դուրս՝ իբր անկախ մարդ, խօսելու, գրելու, գործելու անբռնաբարելի իրաւունքներով օժտուած, եւ հանրային գործերու մէջ շատ չաներէ աւելի բարձր ձայն ունենալու արժանի, քանի որ իրենց ամբողջ կեանքը հանրային գործունէութեան նուիրուած է:

Տնօրէնը իր տեղեկագիրը փակեց վարժարանին ներկայ անկերպարան վիճակը պարզելով:

Մինչեւ հիմայ թաղականութիւնը վարժարանը կը մատակարարէր հոգաբարձութեան չգոյութեան պատճառաւ, հիմա այլեւս իր վրայէն կը նետէ ատարակելով որ հոգաբարձութիւն կայ, իսկ նորընտիր հոգաբարձութիւնը, որուն երկու անգամները միայն կառավարութեան վաւերացուած են, իրաւամբ կատարելէ թէ՛ ինք ձեռնհաս չէ երկու հոգիով ու եւ զործ տեսնելու: Այսպէս կատարեալ անխնայութիւն կը տիրէ թէ՛ ներկային եւ՝ թէ՛ յատաշիկայ տարեշրջանին համար:

Մեր կարծիքով լաւ կըլլար որ այս անկերպարան վիճակին վերջ տալու համար, նորընտիր հոգաբարձութեան զոնէ երկու վաւերացեալ անգամները անգամ մը գործը ձեռք առնէին, քանի որ, ինչ ալ ըլլայ, իրենց իրաւունքն է ատիկայ, եւ իրենք կառավարութեան պահանջէին նոր անգամներու փոփոխութիւնը ու եւ զործի ձեռնարկելու համար: Այսպէս ձգտեցուելով ամիսները պիտի անցնին, սեպտեմբերը պիտի գայ, վարժարանը պէտք պիտի ըլլայ բանալ, մինչդեռ ոչ մէկ կարգադրութիւն չէ եղած, ու հապճէպով պիտի վիճի արտառոցութիւն մը, որ ամբողջ տարի մըն ալ պիտի կորստեան մատնէ, քանի մը հարիւր մանկական հոգիներ ալ փճացնելով: Յուշի վերջը վարժարանին նոր տարեշրջանին թողոր գործերը կարգադրուած ըլլալու են, որպէս զի ուսուցիչները իրենց գործը ստաջուրնէ գիտնան եւ պէտք եղած պատրաստութիւնները տեսնան:

ԱՉԱՏ ԲԵՍ

ՀԱՐՅՈՒՄ ՍԸ  
ԻՐԱՆՈՒՆԻԻ ԽՄԲԱԳԻՐ  
ՅԱԿՈՐ ԳՈՒՐՊԷԹԵԱՆԻ

Որովհետեւ «Իրաւունքի» ետզմաճիէ գարձած խմբագիրը (\*) չըլլալիք ցածու թեամբ մը իր վերջին թիւին մէջ խոյս կուտայ համարձակօրէն պատասխանելէ բացէքաց ու շիպչիտակ իրեն ուղղած հարցումիս:

Կը պարտաւորուիմ երկրորդել թէ՛:

Իրօ՞ք՝ ինչպէս ձանձնած է ատիկան անդին՝ իր թերթին 44րդ թիւին մէջ անձանօթի մը ուղղած ամբաստանութիւններով զիս ստորագործու ահնարկել կուզէր:

Եթէ՛ ալ առածի կարգ անցած տխուր ետզմաճին այս անգամ ալ յականէ անուանէ չպատասխանէ եւ անորակելի սրիկայութեամբ մը կռնակը գարձունելով խոյս տայ, վերջնական հարուածը տալու համար իր արդէն ճղակտոր եղած պատիւին ու վարկին, օճիքէն բռնելով զինքը պիտի յանձնեմ, արդարութեան որուն առջեւ պարտաւորուած պիտի արտասանէ անհրաժեշտ «այոյն» կամ «ոչ»:

Երուանդ Սրբաբեկյան

(\*) Որուն քստմեկի կեանքին վրայ ծանկուած քողը վեր առնելով՝ սարսուռ եւ նոզկանք ազդող տեսարանները պարզելու անհաճոյ դերն ստանձնած են կարգ մը ազնիւ երիտասարդներ:

Ե. Ս

Վլատիքով թատրոն գացած էր, այո՛, Վլատիքով թատրոնն էր... Յետոյ զուրս ելայ գացի... Չես ուզե՞ր մի, գողերը իմ գուրս ելլիլէս յետոյ կը մտնան ու մինչև յետին շիւրջ կը կողորպտեն... կը հասկնամ, եւ մտարեթէ վիճակս... երբ պատուաւոր մարդու մը վրայ կասկածին... այո, ինձի պէս պատուաւոր մարդու մը... Ու բոմանական հայտնաբ մը արտասանեց ուժգին կերպով:

Հաճին խորամանկ նայուածքով մը զայն չափեց, յետոյ Բօրչէթօն ըսաւ:

— Տէ շարունակէ, կարգայ... Մաքէտօնսքի, մտիկ ըրէ, Բօրչէթօն նայէ ի՞նչ սարխոս գրած է Բէթրէսօքին:

— Բոմանացած Բէթրօվին հաւանք, այդ էջը պէտք է ուղիղ ճամբան քաշենք... կարգայ:

Բօրչէթօն ըստ իր սովորութեան իր աննշմարելի մօրուքին վրայ քանի մը շոյուներ ըրաւ, յետոյ գրան կարեւոր նայուածք մը նետեց եւ սկսաւ սկիզբէն բարձր արտասանել:

էյ, աղբար Բէթրէսօք  
էյ, գու բոմանական հաւ  
— Ի՞նչ, ոտանաւոր է, գոչեց Մաքէտօնսքին:

Բօրչէթօն գոռոզութեամբ գլուխը շարժեց եւ նորէն սկսեց:

Ուղիղ չկայ խելապատակդ  
Աղաւ ես թէ՛ հաւ  
Որ ծախեցիր ցեղդ

Մօլտօվանի մը մամալիկայի  
— Չէ, չէ... այս ոտքը լաւ չէ... գոչեց Մաքէտօնսքին, որուն բանաստեղծական զգացումները վիրաւորուած էին ոտքերու անյարմարութեանէն՝ այս վերջին սողերը համաձայն չեն:

«Որ ազգութիւնդ ծախեցիր»  
Ի՞նչպէս էր միւս տողը  
Բօրչէթօն պատասխանեց խոփուած:

Ուղիղ չկայ խելապատակդ  
Աղաւ ես թէ՛ հաւ  
— Այդ լսեցի, ան այսպէս այնպէս ալ կուտուի... Յօժարութեամբ նկատեց Մաքէտօնսքին:

Բօրչէթօն նորէն շարունակեց  
«Դու ծախեցիր ցեղդ  
Մօլտօվանի մամալիկայի»

— Ատնք լաւ չեն, ո՛ւր է ցեղը, ո՛ւր է մամալիկան, գուանանք մը պաշտպանելու ձեռով, ըսաւ Մաքէտօնսքին:

Բայց Հաճին նկատեց  
— Ի՞նչպէս չէ, լաւ, լաւ են, գուն ոտքերուն նայէ:  
Շարունակ Բօրչէթօն

Բօրչէթօն զեղնած կրկին վրայ

ուրախ արտայայտութիւն մը երեւաց, նորէն իր աննշմարելի մօրուքը չուցեց եւ շարունակեց:

էյ անասուն՝ քու փորդ  
Աղբատիք տիրեցով ճարպացած է  
էյ Բէթրէսօք...

— Թո՛ւ, չչնչաց զգոհուութեամբ Մաքէտօնսքին, էյ, աղբար գու բանաստեղծութիւնը շարունակէն սորված ես, կը ներես, կաճուեալ կէնքօն սր ջուրով կածէ Պարչէթօվի գիւնտունը քինէ հազար անգամ լաւ կը յարմարցնէ...

Այս արեւնալի ծաղրանքին Բօրչէթօն վիրաւորուեցաւ, Լաւ մը ծալից թուղթը ու բարկութեամբ ծոցը գրաւ եւ դարձաւ ըսաւ:

— Դո՛ւն ալ ոտանաւորէ կը հասկընաս... Աստուած քեզի խելք տայ, դուն բան մըն ալ չես գիտեր... Ոտանաւորով ամէն գրուած կրնայ ըլլալ... կուզես կարգաւ քեզի «Ո՞ր Պուրկարի-Եիզը» (\*) պիտի համոզուիս որ բանաստեղծներն ալ ասանկ կը գրեն... Ոտանաւորով ամէն բան կարելի է...

Ու Բօրչէթօն ծոցէն գիրք մը հանեց, ու նորէն իր աննշմարելի մօրուքը շոյեց եւ կարգաւոր պատրաստուեցաւ:

— էյ, տեղք, Պարչէթօվը կուգայ, ըսաւ Հաճին եւ լուսամուտը դուրսը:

ցուց, Դո՛ւ ուր բացուեցաւ, եւ Պարչէթօվ շնչասպառ ներս մտաւ, իր հին պատրուած զգեստներովէն էր:

— Ահա Պարչէթօվը... թող ան ըսէ, Բօրչէթօն ոտանաւոր չինելու գլուխ ունենալը, ըսաւ Մաքէտօնսքին: Պարչէթօվ ամէնքն ալ բարեւեց, Հաճին աղատուիլը շնորհաւորեց ու ըսաւ:

— Ընկերներ, կարեւոր գործի մը համար եկայ:

Մաքէտօնսքին սարսափահար նայեցաւ:

— Կարեւոր լուրեր կան, լրացուց Պարչէթօվ: Պարչէթօն մասնաւոր մարդ եկած է նորէն: Շուտով, երթանք, Վլատիքովի մօտ մոզով կայ:

Գիշ մը յետոյ չորսն ալ զպրոցը մտան, ուսուցիչի բնակարանը:

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆԻ  
(Շարունակելի)

(\*) Ոտանաւոր գրուած ապուշ պոռչիւրի մը վերնագիրն է, Պուրչէթօվ սպուած:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կրօնական ժողովը Պօլսոյ մէջ պարագ նստող անպաշտօն վար- պապետ կամ Եպիսկոպոս առաջ- նորդցուններու ցանկ մը պատրաստ- անք է, զոր ասկէ ետքը պիտի զրկէ բոլոր այն գաւառները ուր առաջնորդի ընտրութիւն կատա- րել հարկ պիտի ըլլայ, փոխա- նակ խառն ցանկին: Այս նոր պատրաստուած ցանկին մէջ կե- րեւան, Տ. Հմայակ եւր. Գիւմրաս- Կան, Տ. Յակոբ Աշոտ եպ. Տ. Ե- ղիշէ Մ. Վ. Իսկաբան, Տ. Վա- հան Մ. Վ. Յակոբեան, Տ. Վահ- րիճ Մ. Վ. Եսայիան եւայլն:

Պօլսոյ պատրիարքական շրջա- նակներուն ինչպէս նաեւ ուսու- ցիչներու և ուսուցչուհիներու ծանօթ ուսումնական խորհուրդի քարտուղար Ալիքան Սրբիար, անցած շաբաթ իրիկուն յանկար- ծումահ եղեր է: Պօլսոյ թերթե- րէն ոմանք կըսեն թէ, Սրբիարն Սրբիար դրամական անձկու- թեան գոհ գացած է: Պատրիար- քարանէն չի կրնալով գրամ գտնել, բարկացեր և շրջին տաքնապի մը ենթարկուէր է, և իր սրտի թեթեւ հիւանդութիւնը սաստկանալով յանկարծակի մահ յառաջ բերեր է:

Պատրիարքարանի պաշտօնեա- ներէն Բարթոլ թեւեան և Կ. Խաչատուրեան առաջարկեր են պատրիարքարանին թէ՛ իրենք պատրաստ են կատարել հանգուց- եալին պաշտօնները, պայմանաւ որ անոր առած 800 զրուշը յատ- կացուի անոր այրի տիկնոջ և զաւակներուն:

— Եսպին Գարահիսարի գա-ւառին առաջնորդ ընտրուեր է տեղապահ Սմբատ Մ. Վ. Սաա- տէթեան:

— Ատրպատականի նորընտիր առաջնորդ Եղիշէ Վ. Մուրատեան Ախլցխաէն ձամբայ ելնը է իր պաշտօնատեղին մեկնելու հա- մար: Եղիշէ Վ. Էջմիածին հան- դիպելով պիտի նեակայանայ կա- թողիկոսին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռ Ո Ւ Ր Ք Ի Ս

Օսման փաշա, որ Եւրոպա փա- խած էր, «Խտիվիալ» շոգենաւով Պօլսոյ եկեր է, բայց մերժեր է դուրս ելլել մինչեւ որ Սուլթանէն իր անձին անփխս մնալուն ապա- հովութիւն չըստանայ: Իսկոյն կայսերական թիկնապահներ Օս- ման փաշաի գտնուած նաւը գա- ցեր են, բայց բանակցութիւն- ները չի կրնալով ունէ արդիւն- քի հասնիլ, Օսման փաշա կրկին նոյն նաւով Պօլսէն մեկներ է:

— Խտիվը անակնյալ կերպով օլիս հասեր է ամենուն զարմանք

պատճառելով: Երևուզի նայելով իբր թէ Խտիվը ինք Սուլթանէն խնդրած է եղեր Պօլսոյ այցելել Եւրոպա երթալէ առաջ, Խտիվը անգլիական կառավարութեան չէր իմացուցած իր Սուլթանին այցելելը: 10 օր Պօլսոյ պիտի մնայ:

— Մինչեւ յունիս 26 Պօլսոյ մէջ 4 ժանտախտի գէպքեր պա- տահեր են: Սերպ կառավարու- թիւնը այս առթիւ էքսքրէսին անցըր թոյլատրեր է միայն այն պայմանաւ որ, երկրին մէջ ոչ ապրանք ոչ ունէ առարկայ դուրս հանէ: Իսկ Պուլկարիա նոյնիսկ 11 օրուան քարանդինայի են- թարկած է: Այս պայմաններու մէջ Արեւելեան ձէպընթացին եր- թեւեկութիւնը գաղթեր է: Ռու- մանիա եւս նոյն կարգի խտու- թիւններ ի գործ գրած է Թուր- քիայէն եկող ձամբորդներուն համար:

Երևուզի մէջ հինգ Սուլթան- ներու ամուսնութեան համար պատրաստութիւններ կը տես- նուին, ասոնք երկուքը սուլթան Մուրատի ազնիւներն են: Հար- սանեկան ծախքը 4 միլիոն ֆր. պիտի ըլլայ եղեր:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Ինչպէս մեր նախորդ թիւին մէջ գրած էինք, Ռուսիա, հա-ւատարիմ սլաւական փոքրիկ պե- տութեանց պաշտպանի ուան- դութիւններուն, Պուլկարիոյ ներ- կայ դրամական տաղնապի պա- հուն, փութացած է օգնութեան հասնիլ և 6—8 միլիոն ֆրանքի գումար մը վճարած է պուլկար կառավարութեան ռուսական կայ- սերական պանքային միջոցաւ, որպէս զի յառաջիկայ յուլիսին քուրճները կառավարութիւնը կարողանայ վճարել:

Այս լուրը Սօֆիայի մէջ ուրա- խութեան և երախտագիտական իսկական զեղումով մը ընդուն- ուեցաւ Ռուսիոյ և իմասնաւորի նիքոլա ձարին հանգէպ:

Ներքին գործոց նախարար Սա- րաֆօֆ, որ Փարիզ կը գտնուի 80 միլիոն ֆրանքի փոխառու- թիւն մը յաջողցնելու համար, գարձեալ պիտի շարունակէ իր բանակցութիւնները որոնք մեծ գծուարութեանց կը բաղխին տըր- ուելիք երաշխաւորութեանց պատ- ճառաւ: Կը փնտառին այն տե- սակ երաշխաւորութիւններ որոնք թէ՛ պարտապահանջները գոհա- ցնեն և թէ՛ չի վիրաւորեն Պուլ- կարիոյ անկախութեան զգացում- ները և խնայողութեան գաղա- փարները:

— Մեծ իշխանը, երեսփոխա- նական ժողովի նախագահին, Գարալէլօֆի և արտաքին գոր- ծոց նախարար Տանէֆի հետ ու- նեցած մասնաւոր խօսակցութեան

մը միջոցին ապահովուցած է թէ՛ իր այցելութիւնը քաղաքա- կան խնդիրներու հետ առնչու- թիւն չունի, և ինք միայն եկած է ձարին և ռուս կառավարու- թեան համակրանքը յայտնելու իշխանին և պուլկար ժողովուր- դին. աւելցուցած է նաեւ թէ Պուլ- կարիոյ մէջ ինքզինքը իրեննե- րուն հետ կզգայ:

Յէրտինանտ իշխանը շնորհա- կալութեան հեռագիր մը ուղղած է Նիքոլա Բ. կայսեր, իսկ պուլ- կար կառավարութիւնը Լամտորֆ կոմսին՝ յայտնելով որ Մեծ իշխա- նին այցելութիւնը աւելի կամ- րապնդէ այն կապակցութիւնը, զոր մինչեւ հիմայ գոյութիւն ունի Պուլկարիոյ և Ռուսիոյ մի- ջեւ:

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Ռուսաց Ձարին երբեմնի սի- րելին, յայտնի պահպանողական և ռուսամոլ Բոպէտոնէցէվ, որ կատարեալ պատուհաս մը եղած էր Ռուսիոյ ոչ-սլաւ ցեղերուն համար, այս անգամ հեռացուէր է իր պաշտօնէն: Բոպէտոնէցէվ կայսեր առաջարկեր է որ իրեն աւելի լայն իրաւունքներ տրուի, որպէս զի իր խօքը կարողանայ քալեցնել պաշտօնակիցներուն քով, որոնք իրեն կը հակառա- կէին և որոնք մեծամասնութիւն կը կազմէին: Ձարը պազ ընդու- նեւ լութիւն ըրեր է այս առաջար- կին և քաղաքավարօրէն հեռա- ցուցեր է զայն իր պաշտօնէն:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս

Գերմանիոյ կայսեր նախկին դիւանապետ իշխան Հօէնլօհէ, Բակացի մէջ մեռեր է: Թէեւ զինքը շրջապատողները իշխա- նի վրայ տկարութիւն մը կը նշմարէին, բայց մահուան նշան- ներ չէին երեւեր: Իր սպասա-ւորը առաւօտուն սենեակ մտած պահուն իշխանը մեռած գտեր է. մահը արդիւնք է եղեր սրտի կաթուածի մը: Գերմանական թերթերը անոր գործունէու- թեան գրորուտիքը կընեն եր- կարօրէն և կը գովեն հանգուց- եալին անձնութիւնը:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինաստանի մէջ կարգադրու- թեան կարօտ միակ խնդիրն է գիտնալ որ ինչպէս պիտի գան- ձուին տուգանքի յատկացուած տուրքերը, մարնաւորապէս ա- զինը որ ամենէն աւելի դժուար- ութիւն կը պատճառէ: Պէտք չէ որ ունէ պետութիւն մը պա- տրուակ ունենայ Չինաստանի ներքին գործերուն միջամտելու. այս պայմանը գեսպաններուն բանակցութեանց դժուարացու- մին պատճառ կըլլայ: Բայց այս

խնդիրն ալ պիտի կարգադրուի համաձայնութեամբ, ինչպէս շատ մը ուրիշներ:

— Չինական թերթերը կը գրեն թէ Փու-Չին գահաժառան- քը Շանսի գացած է իր հօր հետ միանալու, որ օտարամերժ բա- րանակ մը պիտի կազմուի: Մ. Նահանգաց շինական գեսպանը 500,000 տոլարի փրկանք կը պահանջէ ամերիկեան կառավա- րութենէն, 1886ին Մօնթանաթի մէջ շինացոց վրայ ի գործ դրուած խտուութեանց համար:

— Քօրէաթի մէջ խռովութիւն- ները դադարած են: Չինական խմբերը որոնք Քօրէա արշաւե- լու կը պատրաստուէին, սկսած են հեռանալ երկրին սահմաննե- րէն: Պրանսական զինուոր. իշ- խանութիւնները որոշեր են չի- նական զօրքերը ազատ ձգել ա- պստամբութիւնները զսպելու գոր- ծին մէջ:

Լ Ե Հ Ա Ս Տ Ա Ն

Անցեալ շաբթու Բօզէն քաղա- քին դատարանին առջեւ սկսեր է անսուղի այն Բոլոնիացի ուսա- նողներու դատը, որոնք Բոլոնիայի անկախութիւնը ձեռք բերելու նպատակ ունեցող գաղտնի ըն- կերութեանց իբրեւ անդամ ամ- բաստանուած էին: Ամբաստանու- թեան մէջ կը լսուէր թէ՛ ուսա- նողները ընկերվարական Բոլո- նիացիներու հետ յեղափոխական շարժում մը կը պատրաստէին: Ամբաստանեալներուն պաշտպան- ները ուզեր են յետաձգել դատը, և երեք փաստափաններ ետ կե- ցեր են դատավարութենէ, տես- նելով իրենց իրաւունքներուն համար ի գործ դրուած սեղմումը: Գատը 15 օր պիտի տեւէ, ժո- ղովուրդը սաստիկ յուզումի մէջ է:

— Ծանր միջադէպ մը պատա- հեր է Բօզէնի արքեպիսկոպոսին և կառավարութեան միջեւ, որ սրդիլած էր կրօնքի ուսացման մէջ Բոլոնիայի գործածութիւնը:

ԱԶԴ

Կը ծախուի 1896ին Վրաց. Չին իշխան Պօրիոի մկրտութեան առթիւ սպուած գործածուած նամակագրոշ- ներ 1. 5. 25 սնդ.

Գրմել՝ ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ  
Վասնա

ОТГОВОРНИКЪ:

Д-ръ М.Ж.ЖРДИЧЪ ВАРГАНЪ

Печ. Взаимность. — Варва.